ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 844-Ա

«11» օգոստոսի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ՝ «ԷԼԲԻՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 161-Ա որոշումը և 2025 թվականի օգոստոսի 6-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ կազմված 2025 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ 08-108-0118-0016 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2,95107 հեկտար հինգերորդ կարգի հնդավոր հողատեսքը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով՝ 210000 (երկու հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ «ԷԼԲԻՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ի դեմս ընկերության տնօրեն

Արտակ Արամի Ադամյանի, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Խորենացու փողոց, շենք 6, բնակարան 45, հեռախոսահամար /094/91-57-52:

2. Օրենքով սահմանված կարգով «ԷԼԲԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, ի դեմս ընկերության տնօրեն Արտակ Արամի Ադամյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր 10 տարի ժամկետով:

3. Պարտավորեցնել «ԷԼԲԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, ի դեմս ընկերության տնօրեն՝ Արտակ Արամի Ադամյանին տարեկան վճարումները կատարել եռամսյակային կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«11» օգոստոսի 2025 թվական
գյուղ Ախուրյան